



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Հ Ա Յ Կ Ա Ձ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

Մ Ի Ջ Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Գ Ի Տ Ա Ժ Ո Ղ Ո Վ`

**«Հ Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Ն Տ Ե Ղ Ա Շ Ա Ր Ժ Ե Ր Ը Ե Ի Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն -
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Փ Ո Խ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը 20-Ր Դ Դ Ա Ր Ո Ւ Ն Ե Ի 21-Ր Դ
Դ Ա Ր Ո Ւ Ս Կ Ի Չ Բ Ի Ն» Ն Ի Ի Թ Ո Վ**

Հայ ակադեմիան համալսարանը եւ Խ. Աբովյանի անուն հայկական պետական մանկավարժական համալսարանը (Հայաստան) 2022 Յոլնիսի 29-30ին կը կազմակերպեն «Հ Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Ն Տ Ե Ղ Ա Շ Ա Ր Ժ Ե Ր Ը Ե Ի Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն - Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Փ Ո Խ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը 20-Ր Դ Դ Ա Ր Ո Ւ Ն Ե Ի 21-Ր Դ Դ Ա Ր Ո Ւ Ս Կ Ի Չ Բ Ի Ն» խորագրով միջազգային գիտաժողով:

20-րդ դարը եւ 21-րդ դարի սկիզբն առանցքային եղած են հայոց պատմութեան մէջ: Անցնող 120 տարիներուն հայ ժողովուրդը ապրած է ինչպէս հայրենագրկման եւ ցեղասպանութեան, Սփիւռքի ձեւաւորման, հայրենադարձութեան, ներհայկական պառակտումներու, Միջին Արեւելքի հայօճախներու հզօրացման ապա եւ թուլացման, սերնդափոխութիւններու, այնպէս ալ պետականութեան կերտման, Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակման, Արցախի ինքնորոշման պայքարի ու Արցախի Հանրապետութեան հռչակման, հայրենակերտման, ու ազգային զարթօնքի շրջան:

Նոյն այս ժամակահատուածին հայ ժողովուրդը ակնատես եղաւ առաջին եւ երկրորդ աշխարհամարտերուն, պաղպատերազմին, աշխարհակարգի ձեւափոխման:

Այս անկիւնադարձային իրադարձութիւնները անջնջելի հետք թողնուցին ինչպէս հայ ժողովուրդի ազգային մտածողութեան, ինքնութեան եւ հոգեկերտուածքի վրայ, այնպէս ալ հասարակական-քաղաքական, կրթամշակութային, ընկերատնտեսական, հոգեւոր-կրօնական կեանքին վրայ: Այս շրջափոխը առանձնայատուկ նշանակութիւն ունեցաւ նաեւ պարբերաբար տեղի ունեցող տեղաշարժերու եւ ատոնց ազդեցութեամբ յառաջացած տարատեսակ փոխակերպումներու դիտանկիւնէն:

Կազմակերպւող գիտաժողովը պիտի քննարկէ այս մեծազդեցիկ գործօններու ազդեցութեամբ

յ առ աջ աց ած փոխակերպումները հայ իրականութեան մէջ՝ 20րդ դարու և 21րդ դարու սկիզբին:

Գիտաժողովի ուղղութիւններն են՝ պատմութիւն, քաղաքագիտութիւն, իրաւունք, ընկերաբանութիւն, մշակոյթ, ինքնութիւն, հայութեան ժամանակակից տրամախօսութիւն:

Գիտաժողովը նպատակ կը հետապնդէ փոխակերպումներու այս ընդհանուր պարունակին մէջ քննարկել, յայտնաբերել եւ բիւրեղացնել այն ուղիներէն թնեքը, որ այս փոխակերպումները յառաջացուցած են եւ այն հիմնուղիները, որոնք տակաւնկատելի կը դառնան 21րդ դարու երրորդ տասնամեակին՝ հայ իրականութեան մէջ:

Պարզելով գլխաւոր ուղղութիւնները, գիտաժողովը նպատակ կը հետապնդէ բարձրաձայնել այն գլխաւոր քայլերը, որոնք պէտք է առնուին լաւագոյն եւ գործնական ընթացք տալու համար հայկական փոխակերպումներու նորագոյն զարգացումներուն:

Չեկոյցները կրնան ըլլալ անգլերէն կամ հայերէն, միջոցումունքային, պէտք է ունենան նկարագրական հիմքի վրայ կառուցուած վերլուծումներ, քննական հարցադրումներ, բաղդատականներ, հետեւութիւններ, եզրակացութիւններ, կրնան ունենալ հայ իրականութեան տարբեր ժամանակաշրջաններու փորձառութեանց վրայ հիմնուած ժողովրդագրական, ինքնութեանակական, կրօնամշակութային-պատմաքաղաքական եւ տնտեսական օրինակներ: Չեկոյցները կրնան ներկայացուիլ համակարգչային powerpoint ձեւաչափով եւս:

Գիտաժողովը պիտի կայանայ երկու հանգրուանով.- **29-30 Յունիս 2022ին երեւան եւ Յունիս 2023ին՝ Պէյրուս:**

Գիտաժողովի մասնակցութեան համար պէտք է մինչեւ **1 Մայիս 2022** հայտ ներկայացնել գիտաժողովի կազմկոմիտէի հետեւեալ էլեկտրոնային հասցէներով՝ stepanyankhachatur16@aspu.am, adakesian@haigazian.edu.lb: Դիմումը պէտք է ընդգրկէ տեղեկութիւններ գեկուցողին կամ գեկուցողներուն մասին (անուն, ազգանուն, ակադեմիական հաստատութիւնը, պաշտօնը, գիտական աստիճանը), ինչպէս նաեւ գեկոյցի համառօտ բովանդակութիւնը 250-400 բառի մէջ: Դիմորդները մինչեւ **15 Մայիս 2022ը** կը տեղեկացուին գիտաժողովին իրենց մասնակցութեան մասին:

Գիտաժողովի մասնակիցներու գեկուցումները պիտի հրատարակուին առանձին հատորով: Մինչեւ այդ հրատարակումը գեկուցումները չեն կրնար այլ փոխակերպումներով հրատարակուիլ:

Չեկուցումներու հրատարակման մանրամասնութիւններու մասին կը յայտարարուի գիտաժողովի ընթացքին:

Յաւել եալ տեղեկութիւններու համար կարելի է գրել stepanyankhachatur16@aspu.am կամ՝ adakessian@haigazian.edu.lb Էլեկտրոնային հասցէներով, կամ գանգահարել հետեւեալ հեռախօսահամարներով՝ +37493733777 (Խաչատուր Ստեփանեան), կամ՝ +9613712058 (Անդրանիկ Տազետեան):

Գիտաժողովի կազմկոմիտէ